


4884

Michigan Supply

55



P-1903

Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

891.85.3

0-30

Հ Հ

ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿ

Ն Ա Վ Ե Լ Լ Ա

Թարգմ.
Ա. ՋԱՂԵՐԴԵԱՆՑ


№ 5

Գինն է 5 դրգ

1903



ՏՊԱՐԱՆ
ԵՂԲ. ԹԱԿԱՐՑՈՒԼԱԶԵ



891.85-3

0-30

ԵԼԻԶԵ ՕՓԵՃԿՈ

ԱԿ



ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿ

Ա ս պ ե լ լ ա

1002
9
545/65/3
3.08.16

Թարգմ.



Թիֆլիս
Տպարան Եղբ. Թատարակիլաձէ
1903

1505

ԹԱՐԱՇ ԱՎՑՈՒՄ

ՀԵՅՎՈԼԵՆԸ ԿԵՆՑՅՈՒՅԾ, ՏԻՖԻՆԵ, 19 ՀԱՅԻ Ք 1903 թ.

շաբաթ այս մայիս այս թուապահց զմոցը
ըստ մ պայմ պահա Արքայուն և անմայր
ու օնարանն ու պահապահութեալ գույն
ծառական բանակոյ օ արքայուն պահապահութեալ
ու օնարան առաք այս թուապահց մայիս
Ս Պ Ի Տ Ա Կ Ծ Ա Ղ Ի Կ
(նովելլա է. Օժէշկով)

Համեստ, բայց ճաշակով վարդարուած
սենեակում երեկոյեան աղջամուղջի մէջ աս-
տիճանաբար մալում էին գոյները, չքա-
նում էին բաղկաթոռների և պատկերների
զծերը. միայն սեղանի վրայ դարսուած մի
քանի գրքերի և ալբոմների մէջ, մանր
ծաղկաւոր թաւշեալ սփոսցի վրայ, պարզ
երկում էր երկար ցողունի գլխին բարձ-
րացող սպիտակ ծաղիկը. Նրա թերթիկ-
ների գործուածքը իւր փայլուն սպիտա-
կութեամբ և ինչոր փխրուն կազմութիւ-
նով լիշեցնում էր ճենապակին. Ճենապա-
կու պէս սպիտակ՝ բարձրացողուն ծա-
ղիկը թւում էր աւելի վեհ ու անարատ,
միւնոյն ժամանակ և միայնակ, հետևա-
պէս տխուր: Այն հարիւրաւոր ծաղիկները,

որոնք շրջապատել էին նրան ցածրից վարդանման պսակով, աւելի ուրախ և առողջ տեսք ունեին: Կարմիր ու մեծապանծ, գիհասակի, վստահօրէն միմեանց սեղմուած, նրանք կարող էին ազատ շշնչալ, ծիծաղել և անել՝ ինչ որ կամենան, այսպիսով բազմութեան մէջ անցկացնելով ժամանակն աւելի ուրախ, հեշտ և առողջ:

Սեղանի մօտ բազկաթոռի վրայ նըստած էր երիտասարդ, բայց լոգնած դէմքով, գեղեցիկ, բայց մարած աչքերով ժիկին և նախում էր մի քանի ժամանակից ի վեր սպիտակ ծաղկի թերթիկների տարօրինակ շարժումներին:

Այդ շարժումը հետաքրքական էր, որովհետեւ առաջ էր գալիս ոչ թէ գըրսից, այլ բոյսի ներոից, գուցէ կամայ թէ ակամալ, տրտմութիւնից թէ վախից, մի խօսքով առաջանում էր նրա, առհասարու կ թագնուած, հօգուց:

Ուն բոլէից, հէնց որ երեկոյեան աղջամուղջ թեթև մութն սկսեց խաւարեցնել օրուայ լոյսը, ծաղկի թերթիկները, կարծես մի անցայտ ուժից գրգռուած, սկսեցին բարձրանալ, սեղմուել, ծածկել առեշքների

գեղին վունչը և վերջապէս այդ թերթիկները միացան, և մի քիչ առաջ լայն բացուած պսակի տեղ գոյացաւ մի ամուր սեղմուած փունջ: Այդ դանդաղ շարժումով ծաղիկը կարծես աչքերը վակելու ցանկութիւնը տուեց և չկամեցաւ մթութեան մէջ արթուն մնալ:

Երբ արևը երկնքում ծածկուեց և սենեակում հանգաւ նրա լոյսը, ծաղկի հողին տրտմեց և նրա սպիտակ դէմքը քնի կամ խորը մտածման միջոցով ծածկուեց զիշեցին խաւարից:

Ծաղկի ննջելուն կամ իւր մէջ կեդրոնայած մտածողութեան գործողութեանը հետաքրքրութիւնով նախող կինը տխուր շշնչաց:

— Զի աւարողանում առանց արևել ապրել:

Ծառան վառած լամպը ներս բերեց, դրեց սեղանի վրայ և յախտեց հիւրի գալուստը.

— Պան Բրոնիսլաւ Գրանիչ:
Վալենտինա Կալինսկին տեղից վեր կացաւ:

— Ներս հրաւիրիր:

Նրա ձայնի մէջ ուրախութիւն էր արտախայտում: Նա բարձրահասակ էր ու շատ բարակ և հէնց այդ պատճառով շատ նաղելի էր թւում: Նրա հագուստը թխագոյն էր, դէմքը սպիտակ, շրթունքները՝ մարջանի նման կարմիր, մազերը՝ սե ու խիտ: Վեր կացաւ մետաքսեայ զգեստը խշշացնելով: Այդ ակամայ շարժումը, բազկաթոռի բազկին յնած ձեռքը և մի փոքր դէպի դուռը թեքուած իրանը նրան մի այնպիսի տեսք էին տալիս, որ կարծես ուզում էր առաջ վազել ուժգնաբար և միևնուն ժամանակ երկչուռութեամբ մեխում էր իւր տեղը: Այդ զիշքով արտայայտուեցին նրա բնաւորութեան երկու միմեանց հակառակ գծերը՝ ուժգնութիւն և ամօթխածութիւն:

Նա սպասում էր:

Շուտով դուռը բացուեց և մի միջահասակ, ոչ այնքան երիտասարդ կամ գեղեցիկ, բայց ճաշակով հագնուած մարդ արագ անցաւ սենեակով և կնոջ ձեռքն զգաց տղամալդի կարճ և ուժեղ սեղմում, որը ներքին տաքութեան աղբիւրից թափուող կայծերի ազդեցութիւն թողեց:

Չեռք սեղմելը լինում է զանազան՝ չոր

ու ցամաք, լպրուն, լիրք, քաղաքավարի, յանդուգն, կոպիտ, իսկ այդ սեղմումի մէջ կարծես սրտի ուժգին զարկի արձագանք էր լսում:

Պան Բրոնիսլաւ Գրանիչը գեղեցիկ չէր և ոչ էլ այնքան երիտասարդ, ուակայն նրա դէմքի գծագրութիւնը, ժպիտը, վարուեցողութիւնը և ձայնը մեծ կենսունակութիւն էին արտայայտում. դա մտքի և զգացմունքների, առաւելապէս զգացմունքների կենսունակութիւն էր: Եւ զարմանալի չէ. նա մասամբ բանաստեղծ էր, մասամբ հրապարակախօս և թէև շատ չէր գրում, բայց գրում էր տաղանդով, որովհետև նրա ոտանաւորներն և արձակ գրուածքներն ընթերցողներին լոյս և ջերմութիւն, առաւելապէս ջերմութիւն էին ներշնչում: Նա խելօք և մտերիմ էր, զլխաւորապէս մտերիմ:

— Գուք այսօր միայնա՞կ էք, — հարցրեց նա:

— Ես յաճախ եմ միայնակ լինում:

— Իոկ ձեր ամուսինը:

— Ամուսինս զտնւում է այն հինգ հորիւր ժողովներից մէկում...

— Որոնք տարուայ 365 օրերը լցնում
են... նրա գործերը...

— Փառ ասիլութիւնը...

— Բուռն մրցումն հակառակորդների
դէմ...

— Ահազին եռանդ, որը ելք է պա-
հանջում...

— Եւ գտնում է ոսկէ հորթի շուրջը...
պարելու մէջ... Մի վիրաւորուէք իմ ան-
կեղծութիւնից. անկեղծ խօսում եմ ցան-
կութեանս հակառակ, կարեկցութիւնից...

— Կարեկցութիւնից, դէպի լնչը:

— Ի՞սպի ձեզ:

Ինչպէս բարեկլու ժամանակ ձեռքը
սեղմելիս, նոյնպէս և նրա ձայնի մէջ սրտի
ուժգին զարկի արձագանքն էր թրթուում,
իսկ նրա գորշագոյն խելօք աչքերն այն-
պիսի համակրութիւն էին արտայալուում,
որ տիկնոջն այնպէս թւաց, թէ իւր մէջ
ինչ-որ բան, որ կարծրացել էր, հալում է,
և վառում է մի ինչ-որ բան՝ որ վաղուց
էր հանգել:

Վալենտինան շուռ եկաւ դէպի լամ-
պը, հայեացքը տնկեց դէպի կրակը ձգուող
ծաղիկը և մտածեց.

«Այս լնչ բան է, թերթիկներն սկը-
ուում են բացուել»:

Իրաւ, ծաղկի թերթիկներն սկսել էին
բացուել: Կարծես մի փոքր առաջ սառած
բան տաքացել էր, և լուսաւորուում էր մի
մարած բան: Սակայն այդ գեռ միայն սկիզբն
էր այն խորհրդական գործողութեան, որը
կատարուում էր բոյսի մէջ, և Վալենտի-
նայի հայեացքը ծաղկի վրայից միայն սա-
հելով դարձաւ Գրանիչի գորշ աչքերին,
որոնք նայում էին նրան համարեա խոնար-
հութեամբ:

— Խմզրում եմ, ներեցէք ինձ իմ ան-
կեղծութիւնը, բայց ես այսօր...

— Երբ ես այսօր ձեզ զբում էի, խընդ-
րելով որ ինձ այցելէք, մտածում էի՝ ան-
կեղծ կըլինեմ, կեանքումս զոնէ մի անգամ
անկեղծ կըլինեմ: Եւ գիտէք ի՞նչ: Այդ
միտքն ինձ ուրախութիւն պատճառեց:

— Ինչո՞ւ ուրախութիւն:

— Իսկոյն կասեմ: Միայն թեթև քա-
միներն են տերևներին շարունակ շշնջում՝
թէ ինչ է կատարուում աշխարհում. միայն
թեթև հոգիներն են լաճախ պատճում մարդ-
կանց՝ թէ ինչ է կատարուում նրանց ներսը:

Միւսները լուսւմ են: Նզանք լուսւմ են հպարտութիւնից դրդուած, որի համար կարեկցութիւնն անտանելի է, լուսւմ են խղճից դրդուած, որը չի ցանկանում գանգատներով ոչ ռքի սևացնել, գիտակցութիւնից դրդուած, որը տեսնում է՝ թէ ինչպէս մէկի խօսակցութեան ժամանակ միւսը յօրանջումով է պատասխանում:

—Կեցցէք, կեցցէք:

Այդ ոչ թէ միայն ծափահարութիւնն էր, և Գրանիչը կամենում էր բառերով ոգեսուն նրան, այլ և զրանով իւր բոլոր հրճուանքն էր յախնում. իսկ տիկինը, ոգեւորուած այդ բանից, շարունակեց.

—Ես ինքս լուակեացների դասին եմ պատկանում: Երբէք չեմ խոստովիսնում և չեմ արդարանում: Այդ թէև խելացի, բայց ծանր է: Բեռ կրող մարդը լաւ գիտէ, որ պէտք է կրէ բեռը, սակայն միշտ ցանկութիւն է զգում այդ բեռը կիսելու մի ուրիշի հետ: Բայց ում հետ: Ի հարկէ աւելի լաւ է՝ ընկերոջ, բարեկամի հետ:

Նա ծիծագեց:

—Այսպէս է բարեկամութիւնը, նա կարծես բեռը բաժանելու դաղբելի ցանկու-

թեան մէջն է կայանում:

—Մի բեռ, որ մեծ բախտաւորութիւն կարող է լինել, երբ վերցնում ես ոիրելիի ձեռքից:

—Մի իմաստուն ասել է, որ անկեղծութիւնը բարեկամութեան սիրտն է. եթէ այդ սիրտը չէ բախտաւմ, բարեկամութիւնը մեռնում է:

—Կեցցէ՛ սիրտը, —բացականչեց Գրանիչը:

Նա տիկնոջ ձեռքը իւր շրթունքներին սեղմեց և ապա ասաց.

—Առաջին իսկ հայեացքից, միմեանց պատահած դէպքում, մի քանի խօսակցութիւնից ես զգացի, որ մեզ կապում է այն դադտնի կապը, որը կոչւում է հոգիների հարազատութիւն: Թող ծաղրածուները որքան կամենան ծաղրեն այն նախազգացմունքները, որոնք կեանքի մէջ աւետում են զերագոյն ուրախութիւնը — հարազատողու հանդիպումն: Այդ նախազգացմունքները գոյութիւն ունին և այցելում են նրանց, որոնց պալարը գեռ չէ սպանել և որոնց մէջ կեանքի առատ աղբեկըները պահուել են ծարաւ եղողների համար:

— Այս, — շշնջաց տիկինը:
Նա թեքուեց գէպի տիկինը, սկսուեց
նրա վրայ իւր հայեացքը և շարունակեց.

— Թա իսկական ուրախութիւն է: Թրա
մէջ ոչ «գործ» կայ, ոչ «փառասիրութիւն»,
ոչ «մրցումն հակառակորդների դէմ», ոչ «ոս-
կէ հորթի» հետքը: Թափել սիրած էակի վրայ
բնութիւնից մեղ շնորհուած զբացմունք-
ների բոլոր քաղցրութիւնը, նրա համար
կերակուր լինել, պաշտպան, ջերմութիւն,
բարի խորհրդատու և փոխադարձաբար
ստանալ նրանից անսասելի բարիքներ, —
այս բոլորը չի նշանակում արդեօք՝ կեանքի
դառն վտակների մէջ գտնել ամենագեղեցիկ
մարգարիտը և տիբապետել յախճապակու
մէջամրացրած ամենաթանկ ագին հարստու-
թեան: Միթէ ես այնքան բախտաւոր եմ,
որ դուք արժանի էք գտնում նուիրել ինձ
այդ մարգարիտը և այդ հարստութիւնը:

— Այս, նոյնը խնդրում եմ և ինձ հա-
մար: Առաջին խակ անդամ, երբ հանդի-
պեցի ձեզ, ես ցնորուեցի, որ... կարելի է...
կարելի է... վերջապէս ընկեր կունենամ:
— Ինչպէս, մինչև այժմ ոչ ոք...
— Ո՞, շատերն են իրենց այդպէս կո-

չել, և շատ անգամ եմ ես նրանց հաւա-
տացել, միայն մի լոպէ: Մարդկացին խօ-
սակցութեան մէջ շատ ինքնակոչներ կան:
Բարեկամութիւն և մտերմութիւն են ա-
նուանում յանախ ոստայնը: Կըփէքամին,
կըփազէ ալիքը, ճանճի թեր կըկպչի, և
ոստայնը կտրուեց, խակ տանջուում է նա, ով
իւր սիրտը ոստայնից կըկախէ: Եւ ընկնե-
լով՝ այդ սիրտը չի փշրում միայն այն
գէպօւմ, երբ նա այնպիսի ապակուց է,
որը եռացրած է մի որ և է անմահ յուսոյ
կըակով:

Անթարթ նայելով տիկնոջ հրաշալի
շրթունքներին, Գրանիչը շշնջաց.

— Մինչև անգամ այսպիսի գեղանի
հողիները՝ կեանքը թունաւոլում է հեղ-
նութիւնու:

— Իմ մէջ հեղնութիւնը միշտ յաղթ-
ուում է մի որ և է անմահ յուսով: Արդէն
կարծում էի, թէ մեռել եմ, սակայն այդ
միայն լետարգիական քուն էր, որից դուք
ինձ դարթեցրիք:

— Այդպիսի հրաշքից յետոյ ես այլ ևս
ուրիշ հրաշք չեմ ուզում: Լինել ձեր բա-
րեկամը, — սկսուելով իւր աւելի և աւե-

լի վառուող հայեացքը տիկնոց հետզհետէ
պայծառացող աչքերի մէջ, նա վերջացրեց.
—Հոգով սոգուել ձեր հոգու մէջ...

Յայտնի չէ, թէ ինչո՞ւ Վալենտինան
յանկութիւն զգաց աչքերը դետին ձգելու և
կատակոլ մարելու այն հուրը, որ, այնքան
անսպասելի և այրող, ընկաւ պարոնի աչ-
քերից նրա վրայ:

—Ուրեմն մենք pacta conventa ենք
կցում, —կատակեց տիկինը:

—Բարեկամութիւն՝ որ երբէք ինքնա-
կոչ չի լինի, և մտերմութիւն, կապ, որից
մեր սրտերը երբէք չեն կտրուիլ, ինչպէս
պոկուած սատայնից:

Նրանք միաժամանակ միմեանց ձեռք
տուին, ուժգին սեղմեցին, իսկ երբ տիկինն
ուղեց ձեռքը լիտ քաշել, Գրանիչը պահեց
և սեեռելով իւր հայեացքը նրա դէմքին՝
առաց.

—Բանաստեղծի ձեռք, շուշանի թեր-
թիկներ և դոդոջուն լարերի կապոց...

Գրանիչի դէմքի վրայ ևս դողացին ինչ
որ գաղտնի լարեր, իսկ տիկինը, յայտնի չէ
թէ ինչո՞ւ, դարձեալ շրջեց իւր շառագու-
նած երեսը դէպի լամպը, որի տաքութիւ-

նից սպիտակ ծաղիկն աւելի և աւելի սկսել
էր զարթնել իւր քնաթաթախ մտածմուն-
քից: Երեւում էր, որ մի փոքր ժամանա-
կից յետոյ նրա սպիտակ պատկը, ինչպէս
արելի ծաղման միջոցին, բոլորովին իրբա-
ցուի: Միայն մի թերթիկի ծալրին երեւում
էր մի մուլթ բլծ, որ առաջ չկար:

Բրոնիսլաւ Գրանիչը վեր կացաւ, մի
րոպէ նայեց պատից կախած պատկերին և
հանդարտ ժպիտը երեսին՝ վերադարձաւ իւր
խօսակցի մօտ:

—Այստեղի հասարակութեան շրջա-
նում գտնուելով, ևս քանիցս լսել եմ, թէ
ինչպէս ձեր ընկերուհիները...

—Ընկերուհինե՞րը, —ժպտալով հարց-
րեց Վալենտինան:

—Ընկերուհիները:

Գրանիչը նոյնպէս ծիծաղեց և աւե-
լացրեց:

—Ի՞նչպէս ենք մենք միևնոյն բանե-
րի մասին միևնոյն տեսակ ծիծաղում: Մըտ-
քերի, ճաշակի, մինչև անգամ ճայնի համա-
ձայնութիւն: Եւ այսպէս, լսում էի, թէ
ինչպէս ձեր ընկերուհիներն ասում էին. «Են
իսեղձ Վալենտինան, այն խեղճ Վալենտի-

նալին, այն խեղճ Վալենտինավկց»։ Ինչու «խեղճ», — հարցրի ինքս ինձ, որովհետև չէի ուզում այդ տիկնանց հարցնել։ Ունենալ հարստութիւն, գիրք, լինել գեղեցիկ, երիտասարդ և այդպիսի մականուն վաստակել՝ շատ զարմանալի է։ Զեր ընկերուհիներն արդեօք չեն ստածում այն 500 ժողովների և 300 թղթախաղի սեղանների մասին, որոնք ձեր ամուսնու տարին են կազմում։

— Օ, ոչ, այդ կողմից ես այդ տիկնանց նախանձն եմ շարժում, որովհետև դրանց կարծիքով ես սահմանադրական այնպիսի մի իրաւունք ունեմ, որ իմ ունեցած մեծ բիւջեի հետ տալիս է ինձ անսահման աղատութիւն։ Մականունը ծագում է այն բանից, որ ինձ այդ բոլոր բարիքը չի ուրախացնում...»

Գրանիչը թեքուեց, որպէսզի միջոց ունենալ ուղղակի տիկնոջ իրեսին նախելու և մի փոքր գողգոջուն շրթունքներով ժպտաց։

— Որպէսզի մի հոգին կարողանայ կարդալ միւս հոգու մէջ՝ չը որ նրանց հայելիները պիտի միմեանց հանդէալ լինին. արտևանունքներով մի ծածկէք ձեր հայելին։

 ՏԵՂՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՑԱՆՑԻ ԱՊՈՒՆԿԱՅ ՑԱՆՑ
ՏԵՂՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Տիկինը եւր աչքերի կոպերլ բարձր-
լացրեց և նրա կրակաչափեր հանդիպեցին
Գրանիչը նոյնպէս բռախառուող աչքերին։

— Այդպէս, լաւ։ Այժմ ես կարողանում եմ կարդալ։ Այդ հրաշալի հայելու մէջ արտացոլում է մի հազւագիւտ հոգի, այն հոգիներից մէկը, որ Աստուած ցրուել է երկրիս երեսին, ինչպէս աստղերը երկնքում, որպէսզի նրանք խաւարը լուսաւորեն։ Փուք գաղափարական անձնաւորութիւն էք, հետևապէս մի էակ, որ տանջւում է հիւանդ, տաղտկալի սիրով դէպի իդեալը։ Ունենալ այդպիսի սէր դէպի իդեալը՝ նշանակում է անտանելի իրերի մասին ունեցած տաղտկութիւնից մեռնել։ Փուք այն անձերից էք, որոնք երազում են աստղերի ճանապարհների մասին, հանդիպող տեսարաններն իրենց սեպհական հմայքներով են զարդարում և իրենց սխալը նկատելով լաց են լինում այնպէս, որպէս թէ մեռելի վրայ արտասուէին, և որոնք տրտմում են, որովհետև ալիքը հոսել գնացել է, իսկ երդը հնացել թագաւորութեան մէջ, որտեղ տիրապետում է թուլութիւնը, կատարելութիւն են որոնում և բաւիտենականութիւն այն բանում, որ

անհաստատութիւն է կոչում. .

Տիկինը ժպտալով կտրեց նրա խօսքը.

— Մի խօսքով, աշխատում են դաշտում թռչող քամու թևերից բռնել և կէտօրին ժամացոյցի վրայ որոնում են տասեցը երրորդ ժամը: Դուք գուշակեցիք: Ես հէնց այդպէս եմ:

Դրանիքը շշնչաց.

— Ես նոյնպէս: Մենք միմեանց նման ենք:

Տիկնոջ երեսին ծալրայեղ բախտաւորութեան լոյս փայլեց: Մեծ բախտաւորութիւն է, երբ քեզ հազկանում են և դու կարդում ես մի ուրիշի երեսին նոյն այն տառերը, որոնցից կազմուած է մեր գոյութեան արտայայտութիւնը: Բախտաւորութիւն արտայայտող հայեցքով տիկինը նայում էր սպիտակ ծաղկին, որը բոլորովին բացուել էր արդէն: Ապա նա զարմացած դարձաւ դէպի իւր խօսակիցը, որը հարցրեց նրան.

— Ի՞նչ արկ դուք ձեր անցեալ տարուայ բարեկենդանի տօնական հանդէսը:

— Դուք ալդ բանը դիտէք:

— Ձեր տիկիներն ինձ պատմեցին: «Ե-

րեակայեցէք, ասում էին նրանք, անցեալ տարուայ բարեկենդանի տօնը շատ աղմկալից և ուրախ անցաւ. ամեն տեսակ զուարձութիւն կար, մենք խելադարների նման մի քանի շաբաթ պարում էինք և ամեն կերպ ժամանակ էինք անցկացնում, միայն խեղճ Վալենտինան՝ հիանալի զգեստաւորած՝ մի քանի անգամ փայլեց պարահանդէսներին և գնաց գիւղը իւր ծնողների մօտ: Ամբողջ բարեկենդանի տօնին, ասում էին նրանք, այդ խեղճ Վալենտինան մնաց գիւղում նստած, որտեղ լուսամուտից նայում էր՝ թէ ինչպէս է ձիւն գալիս»: Այսպէս էին ասում նրանք, այդ ճիշտ է:

— Ճիշտ է: Զգիտեմ, թէ քանիերորդ անգամն է, որ ես փորձել եմ միւսների հետ գնալ զուարձութեան աղբիւրի մօտ, սակայն նրա ջրերն այնպէս սառն էին... պարահանդէսներին ես միայն սառչում էի...

— Դուք սառչում էիք...

— Այս: Ջքեղ զարդարանքներն ինձ չեն սիրում, նրանք ինձ հետ չեն խօսում, չեն փոխանակում ինձ հետ մտքեր և յուզումներ, և ես հատուցանում եմ նրանց փոխարենը. ես նրանց չեմ սիրում, նրանք

ինձ չեն հետաքրքրում. այն տպաւորութիւնը, որ նրանք անում են հասարակութեան մէջ, ինձ համար նշանակութիւն չունի. իսկ ինչ վերաբերում է բարեկենդանի այն անշափ աղմկալից արշաւանքներին, որոնցից մէկին ես մասնակցեցի, նրանք իրենց ազմուկով խանգարում էին ինձ լսել թէ ձիւնն ինչպէս է գետին ընկնում:

— Լսել:

— Այս: Միթէ դուք չէք նկատել, թէ ինչպէս ձիւնի քուլաները հանգարտ ընութեան մէջ անդադար և միանման ռիթմով դետին են ընկնում: Օդի մէջ նրանցից ոչ մէկը միւսից շուտ կամ ուշ չի ընկել, կարծես ըոլորն էլ ենթակայ են այն միւզիկին, որ մենք նրանց թրիչքով միայն կարող ենք դուշակել: Ըս գիւղը գնացի, որ պէսզի լսեմ թէ ինչպէս են ձիւնի քուլաներն ա փոփոխ ռիթմով ընկնում իմ հայրենական տան լուսամուտների առաջ բուս նող կնձնի ծառի ճիւղերի վրայ ... դա մի տարօրինակ ինքնուրոյն երգ է ...

— Իսկ ալժմ՝ ինձ թւում է, թէ ես լսում եմ ալդ երգը...

Եւ որովհետեւ Վալենտինալի ձեռքը լիշեցնում էր շուշանի թերթիկների թըրթուող լաբերը, Գրանիչն առաւ նրա ձեռքը և սրտադին սեղմեց:

— Իմ ծեր հօր պատմութիւնն ինձ համար նոյնպէս երգ է: Նա ալժմ սպիտակել է ինչպէս աղաւնի. նրա երիտասարդութիւնն այնպիսի հերոսական գործով է պսակուած, որ երբ նա իւր լիշողութիւններն է պատմում, ես մտքով սլանում եմ բուռն զգացմունքների, քաջարի գործերի, տանջանքների աշխարհը և ազատում եմ իմ դէպի իդեալը տածած տաղտուկից: Ես պառաւ մայր ունեմ, նա զուրկ է ոտքերից, որ ծանր հիւանդութեան հետեւանք է: Երբ նրանց մօտ եմ լինում, ես հանգարտ, շատ հանգարտ ման եմ ածում մօրս և տան իւրաքանչիւր անկիւնում ցոյց եմ տալիս իմ մանկական քաղցր լիշողութեան և նրա անշափ բարտութեան հետքերը: Այդ զբօսանքի ժամանակ ես ևս կորցնում եմ իմ տաղտուկի:

— Իսկ ես կորցնում եմ իմս, ձեզ լսելով:

Գրանիչը կարող էր աւելացնել «և ձեր ձեռքը շոյելով», որովհետեւ նա անվտահ շոյում էր Վալենտինալի ձեռ-

քը: Իոկ տիկինը, զգայով ներս խուժող մի նոր, անսպասելի հոսանք, օտար այն բուլորին, ինչի մասին ինքն այժմ խօսում էր, յառել էր իւր հայեացքը ծաղկի թերթիկի ժանդուած բժին, որը հետզհետէ մեծանում էր. ապա միւս ձեռքը ճակատին սեղմելով, վրդովուած շարժնակեց.

— Ինչ բանի ասես՝ ձեռք եմ տուել, ինչ բանից ասես՝ բռնել եմ թէ ձեռքով և թէ մտքով, միայն թէ կարողանամ ազատուել այն տաղտկութիւնից, որ պատճառում է ինձ այն անհասանելին, դէպի որը ձտաել եմ: Գիռ ևս իմ հայրենական տանը, երբ ես համարեա երեխայ էի, իմ առաջ փալեց զիտութեան գաղափարը: Ես մղուեցի դէպի նա և արդէն ուզում էի նրա յետևից թուշել հեռու երկրներ, երբ նկատեցի, որ այդ բանով ծնողներիս բոլորովին կըդբախտացնեմ, և մնայի...

— Որպիսի սէր, — շշնջաց Գրանիչը, յենուեց Վալենտինալի բազմոցի բաղկին և համարեա կպչում էր նրա սև մաղերին:

— Սիրաս թռչում էր դէպի մի բարեկամութիւն, որը, ինչպէս երեւում էր...

— Ինքնամլոց էր:

— Թէպի մտերմակտն մի կապ, որը փոխւում էր...

— Ոստայնի:

— Ես փորձեցի գժբախտներին ազատել, կարօտեալներին օգնել...

— Արդ, ուրեմն, և մարդասիրութիւն...

— Մարդասիրութիւնը լիքն է մխիթարութիւններով, բայց ինձ համար գըժուար է:

— Ես լսել եմ, թէ ինչպիս ձեր ամուսինը ողորմածութեան զոլծերն անուանում է...

— Նա անուանում է դրանց այնպիսի մրցանակներ, որոնք տրւում եմ անշնորքութեան համար, իսկ աղքատներին հրամայում է հալածել, որովհետև նրանք վարակիչ կիւանդութիւններ են տարածում...

Վալենտինան խիստ ու անհանգիստ ծիծական կանոնու մատուցում էր մաղերին կպչող ձեռքերից ներս էր թափանցում ինչ-որ սուր և անհանգիստ զգացմունք, որը գըշտ գուում էր իւր զղերը և ճնշում էր խօսակցութիւնը: Նա իրեն համար մի անհանկանալի ցանկութիւն զգաց վերկինալու և հեռանալու:

Վալենտինան վերկացաւ, հեռացաւ իւր խօսակցից մի երկու քայլ և կանգնեց սեղանի մօտ, սպիտակ ծաղկի մօտ, որը իւր երկար ցողունի վրայ արդէն բոլորովին բացուել էր և իւր թերթիկների վրայ արդէն մի քանի սև բծեր ունէր: Սակայն նա, չնկատելով ոչ ծաղկը և ոչ մի ուրիշ բան, ըսկուց արագ ու գրգռուած շարունակել իւր խօսակցութիւնը.

— Եթէ մի փոքր ձիրք, տաղանդ ունենալի, անպատճառ նկարչութեան և երաժշտութեան դասեր կառնէի: Ֆիճաղելի և ամօթ է ասել, սակայն պէտք է ասեմ, որ ես ոտանաւորներ եմ զրել: Ի՞նչ արած, ես մուսաների ընտրեալը չեմ: Ես մուսաների ընտրեալը չեմ, իսկ իմ բունը դատարկ է: Ես զաւակներ չունեմ և ընտանեկան օջաղից զուրկ եմ... Մի՛ հարցնէք, թէ ինչու եմ ես իմ կեանքս այսպէս սահմանել. աշխարհումս անփորձութիւնից և երևակայութիւնից այնքան սխալներ են առաջանում: Երկար կրիխնի դրա պատմութիւնը... իսկ այժմ ի՞նչ անեմ: Փշրե՞մ կապանքները, բախտ որոնե՞մ: Իսկ ծնողնե՞րս, որոնց համար իմ բողոքը ծանր, զուցէ

մահացու հարուած կըլինէր: Ամեն մարդ մի բան ունի, որ պէտք է խնայէ... Սակայն բախտաւորութիւն որոնել... որպիսի՝ անմութիւն: Բախտաւորութիւնը մարդուն ինքն է որոնում, իսկ եթէ չի որոնում, աւելի լաւ է պարտութեամբ ասել՝ «առանց քեզ էլ կապրեմ»: Ես բախտաւորութեանը վաղուց եմ ասել՝ «առանց քեզ էլ կապրեմ»: Սակայն կեանքս դատարկ է: Իւրաքանչիւր առաւու ինքս ինձ հարցնում եմ՝ «ի՞նչ եմ անելու» և պատասխանում եմ՝ «ոչինչ»: Ես տան պատերը անդադար հարցնում են ինձ, թէ ինչո՞ւ եմ ապրում: Պատասխան չեմ դանում: Խեղմութիւնը զանազան է լինում. միայն մարմնի քաղցածութեանը բոլորն են խըզմում և օգնում, իսկ հոգու քաղցածութեան մասին ոչ ոք ոչինչ գիտէ, իսկ զգացողը լուսում է: Իմ հոգին կերակուր է խնդրում, իսկ զուարձութիւններ, զարդարանքներ և գատարկաբանութիւններ նրան հարկաւոր չեն: Իսկ ես բացի դրանցից ոչինչ չունիմ, զուցէ բացի այն հոգուից, որ պատճառում է ինձ իմ շրջուած գլուխը: Իմ գլուխը շրջուած է, ես այդ լաւ զիտեմ: Աշխարհիս ժամացոյցի վրայ ես այնպիսի ժամ եմ որոնում, որ բոլորովին

չկայ. երբեմն ինձ թւում է, թէ այդ ժամը կայ, բայց ես չեմ կարողանում գտնել: Երբ ես լսեցի, որ դուք ուզում էք մեր քաղաքը դալ, յուր, որ մեռած էի կարծում, սկսեց զարթնել լետարգիացից. իսկ երբ ձեզ տեսայ, նա բոլորովին զարթնեց: Զեր մաքի և սրտի փառքը ձեզանից առաջ մեղ հասաւ: Զեր ձեռք սեղմելոց, ձայնի ելեէջներից, ձեր աչքերից և խօսակցութիւնից ես գուշակեցի, որ լոխն ինձ չխաբեց, և ինչս ինձ ասացի՝ արևը ծագում է: Նորից սկսեցի ես անրջել սրտադին և հաւատարիմ բարեկամութեան և այն մասին, որ ուսուցիչ կունենամ: Այսօր հէնց դրա համար էլ դրեցի և խնդրեցի մի ժամ խօսակցութիւն ունենալ և որոշեցի անկեղծ լինել, բոլորը պատմել և պատմեցի: Արևի ծագման մեջոցին ծաղիկների պատկերը բոլորովին բացւում են: Ես մեծ բախտաւորութիւն եմ զգում, որովհետև իմ հոգին ամբողջապէս բաց է մէկի առաջ, որն ինձանից շատ բարձր է: Իհարկէ, դուք հարիւր անդամ խելօք էք մի կնոջից, որը կարողանում է միայն տիրել և որոնել, բայց չէ կարողանում գտնել:

չի մասին աշխատեմ, հէնց թէկուզ տանցուեմ: Միայն թէ տաղտկութեան կրակը մարեմ, հեռու քշեմ ինձանից նրա ուրուականը և տանջանքի բոպէներին կարողանում ասել՝ հեռացէք, չէ՞ որ ես մի բանի ծառայում եմ: Հօրս անցեալլը — դա մի փայլուն սիւն է, որին կրցանկանայի հետեւել, բայց ճանապարհները չեմ տեսնում: Նա, այդ սպիտակ աղաւնին, որ ազ ևս չի տեսնում՝ մեր աշխարհի նոր ճանապարհները չի կարող ցոյց տալ: Գուք բոլորից լաւ պէտք է իմանաք: Պայծառ սիւներին հասցնող բոլոր բարի ճանապարհները դուք գիտէք: Նրանցից մէկն ինձ ցոյց կրտաք, այնպէս չէ: Ես զիտեմ, որ այդ միանգամից անկարելի է: Սակայն ճշմարիտ և անկեղծ բարեկամութեան խորքերում համակրութեան այնպիսի առատ աղբիւրներ կան, որ անկարելին կարելի է դաւնում: Գուք կը լինէք իմ բարեկամը, միւնոյն ժամանակ և ուսուցիչս, այնպէս չէ: Մենք միասին կորոնենք երկրիս ժամացոյցի վրայ այն անտեսանելի ժամը, որի մասին միայն մենք ենք ցնորում: Այնպէս չէ: Մենք կը հարթենք այն ճանապարհը, որ տանում է դէ-

պի աստղերը, այնպէս չէ՞:

Սաստիկ վրդովմունքից նա այսօն չկարողացաւ շարունակել: Նրա երեսն ալրում էր, աչքերը փայլում, ձեռքերը ծալած էր կրծքին:

Գրանիշը նոյնպէս յուզուած նայում էր նրան, յետով մօտեցաւ, առաւ նրա ձեռքը և ասաց.

— Ճշմարիտ է, դէպէ ձեզ ունեցած իմ բարեկամութեան խորքում համակրութեան այնպիսի աղբէւր կալ, որ երբ ձեզ նայում եմ, ամբողջ աշխարհը և ինչ որ նրանում կայ՝ աչքերից և լիշողութիւնից կորչում են:

Նա կարկտի նման համբուրներ թափեց այն ձեռքի վրայ, որը յուր ձեռքերում լարերի նման թրթռում էր և աւելացրեց.

— Ճշմարիտ. ոչ մի բան չկայ, որ ես ձեզ համար չանէի, որի մասին ձեզ հետ շխուէի, որ ձեզ հետ միասին չգնալի որոնելու, միայն թէ կարելի լինէր ձեր աչքիրին նախել և լսել ձեր ձայնը:

Նա զրկեց Վալենտինալի իրանը, իսկ տիկինը բոլորովին դժոջն, ալդ փաղաքշանքին չէր դիմադրում: Նրա աչքերը զոհու-

նակութիւնից թաց եղան:

— Ճշմարիտ է: Մարդ բախտաւորութիւնը միայն այն ժամանակ է գտնում, երբ նա ինքն է գալիս մարդու դէմ հանդիման... Ոչ ինձ, ոչ ձեզ նա եկաւ: Այստեղ մեզ մօտ, ես զզում եմ նրա տաք շնչառութիւնը և այն մագնիսական որժը, որ մեզ տանում է նրա ետևից թէկուզ հէնց անդունդ:

Գրանիշը սեղմեց նրան իւր կրծքին և Վալենտինալի զլուխը, քամուց տատանուող ծաղկի նման, ընկաւ նրա ուսերին:

— Խեղճ, միայնակ աղնի՛ւ, գեղեցի՛կ. ի՞մս ես: Զէ՞ որ իմս ես:

Վերջին խօսքերի հետ Գրանիշի շըրթունքները միացան Վալենտինալի շըրթունքների հետ:

Անեակում լուռթիւն տիրեց: Անցաւ մի լսպէ... երկրորդը: Ապա լսուեց ծանր շնչառութիւն, մետաքսեալ զգեստի խշխշոց և յանկալծ լսուեց կանացի լացող, բայց ուժեղ բացականչութիւն.

— Ո՛չ, ո՛չ:

Վալենտինան անմիտ հայեցքով կանգնած էր սեղանի մօտ և կամ կարմրում կամ դժոջնանում էր: Գրանիշը գլուխը կախ

մնաց այնտեղ՝ որտեղ կանգնած էր:
— Ո՛չ, ո՞չ: Ես այդ չէի ցանկանում:
Դրա համար չէր: Տէր Աստուած, զուցէ,
դուք կարծում էք, ես դրա համար էի ա-
ղաջում...»

Վալենտինան այնպիսի ձայնով ծիծա-
ղեց, որից սիրու էր կտրատում, և շա-
րունակելով ծիծաղել՝ ասում էր.

— Այո, ի հարկէ, հոգիների առնչու-
թիւն, մի հոգու միւսի մէջ թափանցելլ,
դաղախարի մասին տաղտկութիւն... ճա-
նապարհ դէպի աստղերը... պաշտպանու-
թիւն, բարի խորհուրդ... Ո՛հ, ինքնակոշ-
ներ:

Մի րոպէի շափ նա ծիծաղում էր, իսկ
Գրանիչը լուռ էր: Ապա լուռթիւն տիրեց,
և Վալենտինան առանց ծիծաղելու, բայց
տխուր և խոժուած, ցած ձայնով խօսեց.

— Ես անկեղծ էի, հաւատացէք՝ բոլո-
րովին անկեղծ: Բայց դուք իմ մէջ մի
ձայն զարթեցրիք, որին ես երբէք չէի ու-
զում լսել և որին, երբ նա մի մէջ զարթ-
նում էր, ես հրամայում էի լռել: Դուք
զարթեցրիք և նա խօսեց, սակայն, բարե-
բախտաբար, ամօթից խեղդուած՝ շուտով

լրեց: Մենք միասին շենք որոնելու աշ-
խարհիս ժամացուցի վրայ անսովոր ժամը,
որպէսզի ամենսսովորականը չդտնենք...

Այս անզամ Գրանիչը դլուխը կախ մօ-
տեցաւ նրան և խօսեց ախտէս.

— Աղաշում եմ, ներեցէք, գոնէ նրա
համար, որ շ-երկնալին իրերի մասին ես
նոյնպիս անկեղծ էի՝ ինչպէս և դուք, միայն
ինքս ինձ խաբեցի: Ես լաւ եմ հասկանում
ձեր ցանկութիւնների վեհութիւնն ու ձեր
զգացմունքների մաքրութիւնը և երբէք շեմ
դաշտարիլ ցաւելուց, որ իմ ձեռքից ընկաւ
մի զանձ ճենապակեալ շրջավակով, որ
դուք ինձ առաջարկեցիք: Ճենապակին գե-
ղեցիկ է, բայց մարդկանց ձեռքին դիմաց-
կուն չէ: Իսկ իմ ձեռքը թէև գուցէ ինչ-
պէս ուրիշներին կոպիտ չէ, սակայն դար-
ձեալ մարդկալին է: Եյնպիսի արարած-
ները, որպիսին դուք էք, պատահմամբ հն
աշխարհ զալիս, ուստի աշխարհի սովորա-
կան բնակիչների մէջ նրանց վիճակուած
է միայնակութիւն: Ներեցէք ինձ երկնա-
լին էակների վեհանձնութեամբ և հաւա-
տացէք իմ դէպի ձեզ ունեցած անկեղծ և
լսորը յարգանքին:

Նա հեռուից քաղաքավարութեամբ
դլուխ տուեց և դուրս գնաց սենեակից:

Երկար ժամանակ անցաւ: Վալենտի-
նա Կալինսկին խոր մտածմունքից զարթնեց
և պղտոր հայեացքով դիտեց դատարկ սե-
նեակը:

Յանկարծ վեր կացաւ, վերցրեց ա-
պակեաւ ծաղկամանը:

Այս ի՞նչ է: Սպիտակ ծաղկի լայն
բացուած թերթիկները կորցրել էին իրենց
ճկունութիւնը և փայլը, նրանց վրայ բադ-
մաթիւ ժանդու և ուե բծեր էին երեւմ:
Ծաղկին այնպիսի տեսք ունէր, որ կար-
ծես ճմիկ և այրել էին: Այդ՝ արհեստա-
կան լամպ՝ լամպի տաքութիւնն էր արել:

Տիկինը երկար նայում էր սպիտակ
ծաղկի ճմլուած և խանձուած պատկին. նրա
անսահման տիտոր աշքերից սկսեցին կա-
թել արտասուքի խոշոր կաթիլներ, իսկ
շրթունքները, որ ալժմ գժգոյն մարգա-
րիտի էին նման, շշացացին.

—Խեղճը լամպն արեկի տեղ է ըն-
դունել:



ԱՄԵՆԱ ԽԱՇՎԱՐ ԱՆՎԱՆ

4884

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՋԵՐԸ, պատմական
գրոյց, Լէօփ, 2-րդ տպ. 5 կ.
2. 26 ՏՀԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՊՀԻԿ, Մակ-
սիմ Դոյրկու, թարգմ. Մուշէ վ. 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ պատմւածքներ,
Վ. Փափազեանի. 10 կ.
4. ԿԵՍՆՔԻ ԴԱՍԼ պատմւածք
Ա. Ահարոնեանի. 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԵԱՂԻԿ, նովելլա էլ.
Օժէկոփ, թարգմ.. Ս. Շահվ. 5 կ.

ԳՐՔԵՐԻ գլխաւոր պահեստը գտնե-
լում է Մ. Վարդանեանի տպարանում.
Տիֆլիս—Гановская ул. Типогра-
фія М. Вартанянца.

8ՊԱԴՐՈՒՄ է

Շիրվանզալէի «ԱՐՑԻՍՑԻ»

Գինը 15 դր.

ՀՀ Ազգային գրադարան



NL1652403

